

Պ-178<sup>1</sup>-07.11.2017-ՊԻՄԻ-011/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ մասը «համապատասխան» բառից հետո լրացնել «, իսկ օրենքով սահմանված դեպքում՝ պետական գրանցման համար փոխանցման ակտ կարող է չներկայացվել» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Պ-178-07.11.2017,01.12.2017-ՊԻՄԻ-011/1) ՓԱԹԵԹԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑԿԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՍ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՍ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՍ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Պատգամավոր Հրայր Թովմասյան	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, 1-ին հոդված	<p>Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝</p> <p>«Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-32-Ն օրենքի 6-րդ հոդվածում՝</p> <p>1) երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից երկու տարվա ընթացքում իրավաբանական անձանց միությունները պարտավոր են վերակազմավորվել հասարակական կազմակերպության:»,</p> <p>2) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր երրորդ և չորրորդ նախադասություններով. «Պետական գրանցման նպատակով փոխանցման ակտը, ինչպես նաև վերակազմավորվող իրավաբանական անձանց միության հիմնադիրների որոշումները կարող են չներկայացվել: Սահմանված ժամկետում չվերակազմավորված իրավաբանական անձանց միությունները ենթակա են լուծարման:»:</p>	+	Ընդունվել է:

<p><b>Պատգամավոր Հրայր Թովմասյան</b></p>	<p>«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» հայաստանի հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, 1-ին հոդված</p>	<p>Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի 44-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում՝</p> <p>1) «գ» ենթակետը «որոշումը» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» բառերով,</p> <p>2) «է» ենթակետը «ակտը» բառից հետո լրացնել «, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» բառերով:</p>	<p>+</p>	<p><b>Ընդունվել է:</b></p>
<p><b>Պատգամավոր Հրայր Թովմասյան</b></p>	<p>«Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Պ-1783-01.12.2017-ՊԻՄԻ-011/1)</p>	<p>Նախագիծը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>Հոդված 1. «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-22-Ն օրենքի 6-րդ հոդվածում՝</p> <p>1) 4-րդ մասից առաջին նախադասությունը հանել.</p> <p>2) 5-րդ մասից «կրճատ անվանումներին (անվանման հապավումներից),» բառերը հանել.</p> <p>3) 9-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:</p> <p>Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p>	<p>+</p>	<p><b>Ընդունվել է:</b></p>

		<p>«3) ընտրում է (նշանակում է) Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարին կամ Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին.»:</p> <p>Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:</p> <p>Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.</p> <p>«Հոդված 14. Կազմակերպության պետական գրանցումը</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կազմակերպության պետական գրանցումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:</li> <li>2. Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացնելուց հետո՝ ոչ ուշ, քան տասն աշխատանքային օրվա ընթացքում, գործակալությունը պարտավոր է կատարել Կազմակերպության պետական գրանցումը կամ մերժել պետական գրանցումը:</li> <li>3. Եթե անձը փաստաթղթերը գործակալություն ներկայացնելիս օգտվում է փաստաթղթերի նմուշային ձևերից, ապա գրանցումն իրականացվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում:»:</li> </ol> <p>Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասից «5-րդ,» բառը հանել:</p> <p>Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:</p>		
--	--	---	--	--